

# ԱԶԱՏ ԽՕՍՓ

ՇԱԲԱԹ 22 ՍԵՊՏ. 1906. ԱԼԵԿՍԱՆԴՐԻԱ

## ՏԵՐՈՒՆԻ

Ալեքսանդրիոյ հայ գաղութը անցած շաբաթու գառն ու ցաւագին կորուստ մը ըրաւ: Տ. Առհակ Աբրահամեանի քառնամեայ աղջիկը, Օր. Արսինէ Աբրահամեան, կարճ ու անողոք հիւանդութենէ մը ետքը, հակառակ ընտանեկան ու բժշկական յուսակտուր խնամքներուն, իր աչքերը փակեց, անմխիթար սուգի մէջ ընկլմելով իր ծնողքը, քոյրերը, եղբայրները և բովանդակ ազգականները:

Տարաբախտ օրիորդին յուզարկաւորութիւնը կատա: ուեցաւ չորեքշաբթի կէսօրէն ետքը, ամենաչքեղ հանդիսաւորութեամբ: Արժ. Առաջնորդ Հայրը, Աղաւնսնի վարդապետ, յատկապէս Գահիրէէն եկած էր նախագահելու համար տխուր հանդէսին:

Թափօրը Սահակ էֆ. Աբրահամեանի բնակարանէն ճամբայ ելլելով Շէ իֆ փաշայէն գէպի Մէնշիէի հր պարակը ուղղուեցաւ և անկէ Ապու Տարասը փողոցէն անցնելով հասաւ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին:

Իսպաղը քառասնի կողքի մը մէջ դրուած էր ու բազմաթիւ ծաղկեպսակներու ջրակրան յայտ եղած:

Մեռելակողքին առջեւէն կը տանէին սև ծածկոյթը որուն ծոպերէն բռնած էին Տ. Կարապետ Մելգոնեան, Տ. Ատօլֆ Շթօրս, Տ. Լևոն Նիզամեան, Տ. Պ. Յակօբեան, Տ. Կ. Ճիլէրճեան և Տ. Կ. Օհանեան:

Իսպաղին կը հետևէին Ալեքսանդրիոյ գրեթէ բոլոր ծանօթ անձնաւորութիւնները, ինչպէս նաև օտարականներ:

Եկեղեցական արարողութեան աւարտումէն յետոյ, հանգուցելոյն մարմինը փոխադրուեցաւ հայոց գերեզմանատունը ուր գացին նաև յուզարհաւորներու մեծամասնութիւնը, վերջին յարգանք մըն ալ մատուցանելու համար ծաղկաաօրէորդին յիշատակին:

Օր. Արսինէ Աբրահամեան շնորհալի և հրապուրիչ զեղեցկութեան մը կը միացնէր խնամուած կրթութեան և ազնիւ բնաւորութեան գեղեցիկ ձիրքերը եւ բոլոր վիճքը ճանչցողներձին համակրանքը գրաւած էր: Իր մահը այնքան ա-

Նակնկալ ու այնքան անսուք, բնդհանուր վիշտ  
 պիտի պատճառէ Աբրահամեան զեղատամբի  
 բազմաթիւ ժողովուրդս եւ հեռուսր ծանօթնե-  
 լուն:

Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք տա-  
 րաբախտ ծնողայր իրենց այս անգարմաննի կօ-  
 բուտին համար:



Կ ԵՊՈՍՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԱՐԽԱՆԵԼՈՅ

Գլխար նախորդ ցուցակի զոչ սղ	56507
Նոր նուիրատուներ	
Տեաք	
Գառնիկ Չպուքճեան	975
Յ. Պ.	50
Առատչէճ Պէօրէքեան	20
Աորդիս Մարգարեան Գահիրէէն	97,5
Աորդիս Մարգարեան Պալքքճեանի օրդ- ւոյն մահուան առթիւ	20
Օհան Խնտամեան (նոյնպէս)	50
Գրիգոր Միհանօֆ՝ փաղամեռ օր. Հ. Մը- կըրտիչեանի մահուան առթիւ	50
Զահազան ազգայինը Մաննուբայէն	250
Վահան Թէքէեան Գահիրէէն	50
Համագումար	ըր. սղ 58069,5

ՊՈՂՈՍ ԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Ուստի հարցն է նորէն Պօղոսեան վարժարանի խնդիրը: Յայտնի է որ երեք տարիէ ի վերայ կ'իջական ազգային հաստատութեան հսկողարայլ յետադիմութիւնը եւ վտարարացումը, որ ալ ազականացումի հասած է, վերջապէս ապառաւ է ամենէն անտարբեր եւ անհոգ ծնողներուն համբերութիւնը:

Վերջերս ընտանիքի հայրերը տեսնելով սիրենց բողոքները, գրաստութիւն բերանացի, ապարդիւն կը մեան, շնորհիւ առամնորդարան կողմաւ ծեալ վիճակին, հաւաքման մը մէջ, սուսմեական եւ բանիբուն անձերէ կազմուած «Կրօնական Յանձնախումբ», մը կ'ընտրեն, որպէսզի ամէն կարելի միջոցներով սոյն ազգային հաստատութիւնը կանոնաւոր եւ օգտաւէտ ինքի մը մէջ դնէ եւ միանգամ ընդմիջան փակէ իւր զգարողական ազոց ապագան:

Կրօնական Յանձնախումբը որոշած է կրօնական ընդհանուր փոխանակութեան համար միթիւնի մը գումարել սեպտեմբեր 16 կիրակի օրը, Ս. Պօղոս Պետրոս եկեղեցիին մէջ, կրօնական արարողութեանց աւարտումէն յետոյ եւ իր այս որոշումը ապառաւ յայտարարութեամբ մը ծանուցած էր հասարակութեան:

Արդ, շարաթ իրիկուն ուշ առտն, մութիւնը

կոխել է Եւրը, որովհետև խարդախութիւնները միշտ մութին մէջ կը գործուին, փոքրիկ թիփ մը փրայ սուպուած հետեւեալ ազգը հրապարակ կ'ելէր:

«Ժողովուրդ»

Իպրոցական Մանուկութիւն մէջ անակընդ պալ անհամաձայնութեան մը հետեւանօք վազը եկեղեցւոյ մէջ անգլի ունենալիք Միթինկը յետաձգուեցաւ յառաջիկայ կիրակէ սեպտ. 23ին:

Իպրոցական Յանձնախումբ:

Յայտնի է թէ ո՛վ էր այդ խաբէբայութիւնը գործողը, ո՛վ էր միթինկը խանգարելու շահ ունեցողը, բայց ամէնէն անպատիւ մարդն ալ կարծենք այս աստիճան ազտօտ միջոցներու չպիտի գիմէր իր պաշտօնին կառչած մնալու համար եթէ բարոյականի գոնէ շոշափ մը քովը գտնուած ըլլար:

Ինչ որ է, խնդիրը այն է որ հետեւեալ օր բազմաթիւ ձեռքներ հաւատք ընծայելով այդ կեղծ յայտարարութեան, շեն դար գումարման էւ Յանձնախումբը կը ստիպուի ուրիշ օրուան մը ձգել միթինկը:

Այդ միջոցին Պօղոսեան վարժարանի անօրէնը, պ. Սմբակ Բիւրատ, շրջաբերական նամակով մը ձեռքներուն կը ծանուցանէ թէ վարժարանը յառաջիկայ հոկտեմբեր 2ին պիտի բացուի եւ կը հրաւիրէ զիրենք որ նախապէս գտն

իրենց տգարը արձանագրել տալու:

Յողքարկու ճնողքները սակայն մինչև այսօր մերժած են իրենց գուակները արձանագրել և որչաժ են գպոց չզրկել զոնոնք մինչև որ ուսուցչական մարմնայն փոփոխութեամբը դպրոցը կանձաւոր եւ բարեկարգ վիճակի մը մէջ գտուի:

Ա Ղ Չ Ա Ն Կ Ա Ր

Պ Օ Ա Պ Ն Ե Ր Ը

Գիշերական խորհուրդով

եւ լրութեամբ լ՛յնազգեստ՝

Սերովբէն է անվրդով

Մեր զուտներուն հատարեալ

Ամէն տան մէջ համանոյն,

Համաշուրթ և համաաի՝

Դրբան ետին է իր բոյն

Եւ ինք Իպիսն է արդի:

Հողիւ հաւու քուն ունի

եւ կը թըւի ինծի ան

Ըլլալ մի քիչ ներքիծի՝

Երբ մութին մէջ գիշերուան

Այր մ'ն կին մ'իբ առջեկէ

Կը մտնեն ներս հապըշտապ,

Տի. Ղև. Կրթ. ստուտենկ Կը թօթուեն

Սոււանն իրենց սիրատապ

Կանայք զլիտեն վրայ իրեն...:

Ի տոցոյ՝ տիտոյ Կանդրասին

Դրրան ետին կը նիրհեն,

Դրրան մ'առջև կը նստին՝

Ուր, օրուան մէջ, Կէնդունին

Այցելուննր բազմաթիւ

-- Ծառաներէն զատ տունին --

Եւ կըզգենուն փառք, պատիւ:

Աստու, զերեկ, օրն ի բուն,

Ամսապլիտեն մանաւանդ,

Վարձակալաց բանիրուն

Կուպան բարև մ'արպաւանդ.

Սեր նոր-տարին՝ նոր-տարի,

Պայրամն իրենց՝ է Պայրամ...

Զկնքը անթոյճ խերկարի

Գչպի՛ զրրան կամ զրրամ...:

Գիշերական խորհուրդով

Ի վրայ զիճոյ կը զրոնէ-թեմամբ շնչնազգեստ՝

Գծմնասամու Աերօզրէն է անվրգով

Ի վրայ միտաս՝ Մեր դռնաներուն հաստարեստ...:

Ի տոցոյ՝ Կանդրասին

Ի տոցոյ՝ Կանդրասին

Ի տոցոյ՝ Կանդրասին


Ի տոցոյ՝ Կանդրասին

Ի տոցոյ՝ Կանդրասին

Ի տոցոյ՝ Կանդրասին

Ի տոցոյ՝ Կանդրասին

ԱՍՈՒՊ



## ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ «ԼՈՒՍԱՐԵՐ», ԻՆ

Լուսարեր անուն լրագրին և անոթ խմբագրական ու վարչական մարմինն հոգեբանական ապիկարութեան և գարչապարալէզ ցանկութիւններուն իմաստակօրէն ու ուսցիկ ունայնութեան զանգուածային ազտեղութիւնը չափել կշռել ու հայ ժողովուրդին ներկայաշունել իրր գլուխ գործոց մը ահաւոր ու վարչելի զզուելութեան, աս բանը ընել՝ թող մեր ճիտին պարտքը ըլլայ՝

«Կրակ» յեղափոխական թերթին վրայ պէտք էր յարձակիլ, սակայն ան ինչ ստորնաբարչ յարձակում, ան ինչ անպատճառաբան, անտեղի, անիմաստ ու անարդարանալի յարձակում, ու ատ ալ՝ ինչ յեղյեղուկ ու ինչ ցածէն խօսող մարդերու կողմէ Տէր Աստուած:

Մենք ուրիշներուն պէս չենք մտածեր թէ ապիկար ու դեռ սաղմային ապուշութեամբ առլյուն գրիչներուն պէտք չէ պատասխանել. ընդհակառակը մեր կարծիքով «Լուսարեր»ի պէս անգիտակից ու հայութեան շատ աղիտարեր բրածոյական օրկաններու գոյութիւնը պէտք է խարազանել ամենամտողորմ գաւազանահարութեամբ իրենց խանձարուչին մէջ ճրգմելու ու սատկեցնելու համար անիծները ոչիլներու այդ լղրճուկօրէն գարչանրոտ զանգուածին:

Որովհետև, լուրջերու հետ է որ կարելի է լուրջ ըլլալ իսկ երբ ունիս դէմդ մարդակերպ անասուններ որոնք թերթի մը անունին տառական իմաստին շուրջ պտտկելով « ջրհանկիրներու » տրաբանութիւններով յօղուածներ կը թխեն, մաշած ու հիւանդոտած սրիկայի մը փթամտութեամբ, այդ կարգի օձերուն պէտք

է զըսիւք շանսատակ հանել ոտնահար Չախջախու-  
մով:

Ուրեմն, աւաթիկ քանի որ բազկս զէմերնիս ու-  
նինք թ'ունաւոր ու ժահրոտ անասուն մը, մենք ալ կը  
զինուինք ըստ այնմ և անանկ կը կանգնինք անոր զի-  
մաց:

Է՛, «Լուսաբեր» հակայեղափոխական ըզձանքնե-  
րովդ գոնէ լրջօրէն ի յայտ եկուր, որպէսզի այլուր  
պատասխանենք քեզի լրջօրէն:

Բայց ասանկ հետուանց հետու ու կարծային խոյ-  
թուկներով վերաւորուողներէն չենք: Գիտե՛նք թէ մի-  
ջատները ինչպէս պէտք է մահացնել և ուշագործ եզիր  
«Լուսաբեր» Պոլիսէն մինչև Եգիպտոս, քեզմէ շատ ա-  
ւելի խոշոր ու իրապէս քեզմէ շատ աւելի գոյութեան  
իրաւունք ունեցող ունայնութիւններ ունեցած ենք  
մեր ոտքերուն տակ:

Ու հիմա, մի վախնար այլևս, և բաց բերանդ չար-  
ցէ շնական կզակդ, թափէ երախիւ մէջ շտեմարան-  
ուած ամբողջ հակահայ ու հակայեղափոխական թա-  
րախոյ, որպէսզի պատրաստենք մենք ալ ան շաղախը  
որով զիտենք թէ ինչպէս պէտք է ծեփել քու կոյու-  
զիական կոկորդոս:

ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶ

ԹԱՏՐՈՆ

Ա. Պէնչեանի տնօրինութեան տակ գտնը-  
ւող Վէսէլօ (Չուարթ) թատերախումբը Ալհամպ-  
րա թատրոնին մէջ երեք ներկայացում տուաւ  
մեծ յաջողութեամբ: Ամէն անգամն ալ թատրո-

նը գրեթէ բացուած էր հայ և օտարազգի շաղ-  
մութեամբ մը:

Պետր է խօստովանիլ որ թատերանոցները  
ի անունը քաղցած չէ, և իրա՛ն զուարթ կամ  
մանաւանդ զուարթացնող թատերախումբ մըն է:

Գերակատարները, ճանաչողաբար Ա. Պէն-  
լեան և օր. Ռօզալի միշտ յաջող ին իրենց գե-  
րերուն մէջ և խմբին գլխաւոր ուժերը կը կազ-  
մեն:

Անոնք որ իրենց մեղմադձութիւնը փնտա-  
նելու կամ խանդարեալ մարտդութիւնը բժշկե-  
լու համար պէտք ունին քահրահաձայն խնդա-  
լու, կրնան վստահօրէն գլխել Վէսելօ խմբին  
ներկայացումներուն:

Ա. Պէնլեան Ալիքսանդրիոյ մէջ իր գտած  
յաջողութենէն քննադրեալ որոշած է վեց ներ-  
կայացում եւս ալ Ալհամպրա թատրոնին մէ:  
յառաջիկայ չարաթ սեպտեմբեր 29էն սկսեալ:  
Վերոյիշեալ 6 ներկայացումներուն համար մաս-  
նաւոր բաժանօրդագրութիւն մըն ալ բացուած է  
հարիւրին քսան գեղջով:

Տրուելիք առաջին ներկայացումն է «Անա-  
տօփ Արիւնտո Հարանիքը», չարաշուք տիազոս  
մը որ կը խօստանայ սակոյն երգախառն քօմե-  
տի մը ըլլալ երեք արարմանով և մէկ պատկե-  
րով (օր. Ռօզալիի պատկերը անշուշտ):

Ներկայացման պիտի յաջորդէ, ինչպէս միշտ:

հայերէն և տաճկերէն երգեր քչ. Ռօզալիի կողմէ. յետոյ Հովիւ և Հովուուի Թրիոնուտր այնքան մեծ հաճոյք սրտաճառած է հանգիստեաներուն:

Կը յուսանք որ պր. Պէնչեան կրկին պիտի գտնէ իր առաջի երեք ներկայացումներու յաջոջ զութիւնը:

Գիները չափաւոր են օր. Ռօզալիի հասակին պէս. օթեակ առաջին կարգ 80 զրուշ ողջ, երկրորդ կարգ 60. աթոռ առաջին 15, երկրորդ 10, կալըրի տղոց համար 5 զրուշ ողջ:

Ուրեմն ընթերցողներ «Գացէ՛ք տեսէք գայլըն է եկեր հօ՛ւ»:

### ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

Եւ եղաւ ժր օգերը զովանալ սկսան ու Եւրօպոս դասող ծիծեռնակները կը վերադառնան իրենց Եգիպտոսի բոյնը Այգ՛:

Ծիծեռնակ ծիծեռնակ

Դաւ գարնան սիրուն թռչնակ

ներուն մէջ յիշենք մեր սրտակից բարեկամը Տ. Յակոբ Ուղուրեան, որ հինգշաբթի օր իր սաքնըրը դրաւ Ալեքսանդրիոյ քարափներուն վրայ, թեթեւ ու ուսուստուն օդապարիկի մը պէս որ իր աւազը պարպած է:

Ողջոյն ուրեմն և բարի գալուստ:

Հրատարակուեցաւ Վենետիկեան գեղարուեստական հանդէսին՝ ԳեղՈՒՆԻ նոր հատորը ամենաչքեղ սպագրութեամբ և գեղեցիկ պատկերներով:

Այս սարուան հատորին հասոյթը սահմանուած է Կովկասի հայ արկածեալներուն:

Ուրեմն անոնք որ 10 ֆր. տալով պիտի գնեն այս սարուան Գեղունին կրկնապէս խաբեբայութիւն մը գործած պիտի ըլլան, նախ՝ իր բուն արժէքէն շատ նուազ գնով պիտի մը տիրանալով, յետոյ առանց որ և է նիւթական զոհողութեան մը օգնած ըլլալով Կովկասի մեր եղբայրներուն:

Կը յուսանք որ Ալեքսանդրիոյ մէջ բաւական բազմութիւ հայեր պիտի գտնուին այս անսեղ խաբեբայութիւնը գործելու:

Գեղունին կը վաճառուի Վենետիկի Մխիթարեան-Ներու Ալեքսանդրիոյ ներկայացուցիչ Տ. Յ. Ղազիլիանի քով:

Ինչպէս յայտնի է, Ազատ Բեմ ասկէ առաջ Կովկասի հայ արկածեալներու ի նպաստ բացած իր հանգանակութեան մասին վերջին բառը ըսած էր: Այդ վերջին բառը հասած ըլլալով Թիֆլիզի նպաստամատոյց յանձնախմբին բաժնուած է կարօտեալներուն:

Հինգշաբթի դիշեր քառասունի չափ ծնողքներ կրկին գումարում մը ըրած են Պողոսեան վարժարանի մասին և որոշած են իրենց աղաքը դպրոց չղրկել մինչև որ վարժարանը բարեկարգուի:

Միւս կողմէ պաշտօն յանձնած են դպրոցական յանձնախմբին հարկ եղած գիմուսները ընկուլ, ուր որ

անկ է, որպէսզի յառաջիկայ տարեշրջանին անհրաժեշտ  
չառտած փոփոխութիւնները կատարուին ուսուցա-  
լսն մարմնոյն մէջ:

Լօզանէն լուր կը տրուի թէ Տ. Աստուր պէյ Շէ-  
րիտճեան, ամսուս 17 երկուշարթի օր, տեղւոյն վար-  
ժապետանոջին մէջ փայլուն քննութիւն մը սալով,  
ղարդական հոգաբարձուի առաջին վիայական ստու-  
յած է, « վարդապետ ի հոգաբարձութեան » տիտ-  
ղոսով:

Տ. Աստուր պէյ այս առթիւ թէզ մըն ալ պատ-  
րաստած է եղեր, նիւթ ունենալով « Դպրոցական տը-  
ղոց հզուններուն կտրուելու անհրաժեշտութիւնը եւ  
վարժարաններու գործարանները ասիա ֆէնիքով սըր-  
բելու պէտքը »:

Նոր վկայաւորք քիչ օրէն կը սպասուի Ալեքսան-  
դրբիա:

## Ա. Զ. Դ.

Հայ տոմարակալ մի որ երկար տարիներ Կ. Պօլիս  
Ռէժիի վարչութեան մէջ պաշտօն վարած է և իր բու-  
ւոք պաշտօնավարութեան վկայադրերն ալ ունի եւ  
չորս տարի ևս Վերին Եգիպտոսի մէջ ծանօթ առեւ-  
տրրական տան մը քով իբրի հաշուակալ ծառայած է,  
այժմ պատրաստ է իբրի այցելու կամ մնայուն պաշ-  
տօնեայ ծառայել վաճառական տան մը մէջ: Կարող է  
նաև վարել արկղակալի պաշտօն և առ այդ հարկ եղած  
երաշխաւորութիւնները սալ: Գաւառներու մէջ եւս  
պաշտօն կը ստանձնէ, եթէ պայմանները յարմարին:  
Դիմել « Ազատ Սօսք » ի հասրէին:

Գառնակերեան Սրբազան որ Երուսաղէմ կը  
չոնուէր, Եւֆայէն ամսուա 20ին շոգեմաւ նրս-  
տած է Եգիպտոս դալու համար:

Նորին Սրբազնութիւնը բաւական ժամանակ  
պիտի մնայ հոս և ուղևորութիւն մը պիտի ընէ  
դէպի Վերին Եգիպտոս:

Խնդիր մը ստեղծելու համար արդեօք չե՞նք  
կրնար զինքը այստեղի առաջնորդ ընտրելու ջան-  
քեր ընել:

Կ'արժէ այս մասին մտածել:

ՋԱՐՄԱՆՍԼԻ ԵՐԵՒՅԹ ՄԸ

Երեք շաբաթ է ի վեր ամենայն Կանոնաւո-  
րութեամբ, Ալեքսանդրիոյ մէջ, Մառօնիթներու  
փողոցը գտնուող շէնքէ մը, որուն պտորին յարկի  
անկիւնը կը գտնուի տպարան մը, Կրակը ծա-  
գելով, կայծակի արագութեամբ կը ծաւալի կոր  
դէպի Մէնչիէի հրապարակը և հոնկէ բոլոր մե-  
ծակայ թաղերը:

Կրակը այսքանով սակայն գոհ չըլլալով ճա-  
րակած է նաև Թանթա, Զակաղիկ, Մանսուրա  
ու մանաւանդ Գահիրէ, մինչև իսկ հասած է Հէլ-  
վան ուր բռնկցուած է կարգ մը անձերու բամ-  
պակէ ուղեղները: Այս վերջին զոհերուն մէջ ցա-  
ւօք սրտի կ'արձանագրենք Տատուր անուն գրա-  
դէտ մը, որուն փառքն ներբողեց, այս էջերուն  
մէջ, Բարսեղ Շահպաղ:



“ ԱԶԱՏ ԽՕՍՔ ”, ի Պալմանները

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՄԲՔ ՕՐԵՐԸ

Ի վիստիսի Կանար բաժնեկցիներ է

40 ԹԻ ԻԸ 40 ՂՐԸ ԴՂԶ

20 ” ” 20 ” ”

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵՒՐՈՊԱ 40 ԷԻԻ 10 ՖՐԱՆՔ

ՌՈՒՍԻԱ ” ” 4 ՐՈՒՊԼԵ

ԱՄԵՐԻԿԱ ” ” 2 ՏՈԼԱՐ

Բաժանորդագրութիւնը կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԸ . ՈՂԶ

“ ԱԶԱՏ ԽՕՍՔ ”, ի համար բաժնեկցին կամ  
որ և է գրութիւն պէտք է ուղղել հե-  
տևեալ հասցէին

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, ( EGYPT )

Ծանուցումներ կընդունուին մասնաւոր  
պաշտաններով:

Պատասխանատու . Խ'րապիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր Փոքր Գ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ Ալեքսանդրիա